ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 135- Ա **29 հունիսի 2018 թ.**

ԱՄԱՌՎԱ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՈՂԱՓՈՒՄ ՏՈՒԺԱԾ ԱՆՁԱՆՑ ՇՏԱՊ ԵՎ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ՊԱՏՇԱՃ ԵՎ ԱՐԱԳ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԼՈՂԱՓՈՒՄ ՇՏԱՊ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Ամառվա ամիսներին Սևանա լճի Մարտունու տարածքի հանրային լողափում տուժած անձանց շտապ և անհետաձգելի բժշկական օգնությունն ու սպասարկումը պատշաճ և արագ կազմակերպելու նպատակով՝ «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին.

1) 2018 թվականի հուլիսի 1-ից օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում ժամը 10:00-ից 21:00-ն լողափում սահմանել «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության շտապ բժշկական օգնության ծառայության լրացուցիչ հերթապահություն.

2) աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով մշակել ու հաստատել հերթապահության ժամանակացույց և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմ.

3) կատարված աշխատանքների մասին յուրաքանչյուր երկուշաբթի տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմ:

2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի խորհրդական Արտաշես Նիկոյանին:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ